

Մամուլի հաղորդագրություն

23. 04. 2020 թ.

Արտաքին գործերի նախարարը ՔՈԱՖ-ի ուղիղ եթերի հյուրն է

Ապրիլի 24-ին՝ ժամը 20:00-ին, «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (ՔՈԱՖ) կողմից մեկնարկած «*INSTALIVE*» հանդիպումների շարքի (Ինստագրամյան ուղիղ միացում) շրջանակներում զրույց է ՀՀ արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանի հետ:

[ՔՈԱՖ-ի ինստագրամյան էջով](#) ուղիղ միացմամբ հասանելի զրույցի ընթացքում ՀՀ ԱԳ նախարարն անդրադառնալու է օրվա խորհրդին, ցեղասպանությունների կանխարգելման օրակարգի կարևորությանը և դրա առաջնական ուղղությամբ ձեռնարկվող քայլերին:

Կխոսվի նաև նոր տիպի կորոնավիրուսի պայմաններում ՀՀ ԱԳՆ աշխատանքի առանձնահատկությունների, մարտահրավերների ու հնարավորությունների մասին:

Ինստագրամյան զրույցի ընթացքում արտգործնախարարը կներկայացնի նաև երիտասարդների ու պատանիների ներուժի զարգացման, կայացման և մրցունակության իր բանաձևը:

Լրագրողներն իրենց հարցերը կարող են ուղղել նախապես ՔՈԱՖ-ի մեդիա հարաբերությունների համակարգող Անահիտ Էվոյանին՝ Anahit.evoyan@coaf.org հասցեով կամ գրել ՔՈԱՖ-ի [ֆեյսբուքյան](#) կամ [ինստագրամյան](#) էջերին: Միաժամանակ խնդրում են հաշվի առնել, որ նախապատվությունը տրվելու է հանդիպման մասնակիցների հարցերին:

ՔՈԱՖ-ի INSTALIVE կոչվող առցանց հանդիպումների շարքը հետաքրքիր ու տարբեր ոլորտներում հաջողության հասած հյուրերի հետ զրույց է արվեստի, առողջության, բիզնեսի, մեդիայի, քաղաքականության, սպորտի մասին: Շաբաթը մեկ օր համերգային ծրագիր է, երբ արվեստագետը հենց մեր եթերում իր գործերն է կատարում: